

DOI: <https://doi.org/10.59546/18290744-2023.1-3-92>

ՆԱԻՐԱ ՇԱՀԻՆՅԱՆ

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական
դատավարության ամբիոնի ուսումնական ասիստենտ,
ոստիկանության կապիտան*

SHAHINYAN NAIRA

*Assistant at the Chair of Criminal Process of the Academy of the
Educational Complex of the Police of the RA,
Police Captain*

НАИРА ШАГИНЯН

*Ассистент кафедры Криминального процесса
Образовательного комплекса Полиции РА,
капитан полиции*

ԲԱՅԱՌՄԱՆ ԿԱՆՈՆԻ ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՉ ԻՐԱՎԱԶԱՓ ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

EXCEPTIONS TO THE EXCLUSIONARY RULE IN THE UNLAWFUL ARREST CONTEXT

ОТСТУПЛЕНИЯ ОТ ПРАВИЛА ИСКЛЮЧЕНИЯ В КОНТЕКСТЕ НЕЗАКОННОГО АРЕСТА

Բացառման կանոնի տեսությունը սահմանում է անձանց սահմանադրական իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույցների անթույլատրելիությունը: Տեսության հիմքը դրվել է ԱՄՆ գերագույն դատարանի կողմից «Վիքսն ընդդեմ Միացյալ Նահանգների գործով» 1914 թ., որով առաջին անգամ արձանագրվեց, որ ԱՄՆ սահմանադրության Չորրորդ փոփոխության խախտումն ինքնին կարող է հիմնավորել ապացույցի բացառումը¹: Այս փոփոխության նպատակն է ապահովել, որ Միացյալ Նահանգները չդառնա մի ազգ, որտեղ Պատրիկ Հենրիի խոսքով. «Անձինք արգելանքի են վերցվում, գույքն առգրավվում է ամենակամայական կերպով առանց որևէ ապացույցի և հիմնավորման» պետական իշխանության ուժով²:

ԱՄՆ դատական պրակտիկայում ձևավորված այս կանոնը հետագայում որոշ տարբերու-

¹ Տե՛ս *Bradford P. Wilson*, California State University San Bernardino, Exclusionary rule, էջ 2-3, <https://www.ncjrs.gov/pdffiles1/Digitization/100738NCJRS.pdf>:

² Տե՛ս նույն տեղում:

թյուններով իր տարածումն է գտել նաև այլ երկրներում³, այդ թվում՝ ՀՀ իրավական համակարգում. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ ապացույցների թույլատրելիությունը սահմանող 97-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ «Ապացույցներ ձեռք բերելիս էական են նաև այն խախտումները, որոնք դրսևորվել են մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների ոտնահարմամբ կամ քրեական վարույթի սկզբունքների խախտմամբ»:

Թեև բացառման կանոնը ժամանակի ընթացքում ենթարկվել է որոշ քննադատությունների⁴ և դատարանների կողմից ստեղծվել են այն բացառող նախադեպեր, այդուհանդերձ տեսական դաշտում մնացել է անխոցելի, իսկ քննադատությունները՝ չհաղթահարված:

Հոդվածի հետազոտության առարկան կազմում են բացառման կանոնի բացառությունները՝ ոչ իրավաչափ ձերբակալման արդյունքում ձեռք բերված ապացույցների թույլատրելիության հարցի համատեքստում: Հետազոտվել են նման ապացույցների և ձերբակալման միջև առկա պատճառահետևանքային կապերի բնույթը:

Սույն հոդվածի իմաստով ոչ իրավաչափ ձերբակալում ասելով նկատի ունենք թե՛ ձերբակալման կարգի խախտմամբ ձերբակալումը և թե՛ ձերբակալման հիմքի բացակայությամբ ձերբակալումը:

Ձերբակալումից հետո ձեռք բերված ապացույցները միմյանցից կարող են տարանջատվել հետևյալ առանձնահատկությամբ.

1) ապացույցներ, որոնք ոչ իրավաչափ ձերբակալում իրականացնելուց անկախ են ձեռք բերվել և որևէ կապ չունեն ձերբակալման փաստի հետ, այդ փաստից անկախ ապացույցներ են. սա իրավունքին հայտնի է իբրև անկախ աղբյուրի տեսություն⁵, որի դեպքում ապացույց ձեռք բերելու աղբյուրն «աղտոտված» չէ մինչ այդ կատարված անթույլատրելի գործողություններով: Օրինակ՝ ձերբակալման պահին կասկածը չի եղել ակնհայտ անմիջականորեն ծագած և հիմնավոր, սակայն ձերբակալման փաստից անկախ օրինական եղանակով ձեռք է բերվել տեսագրություն, որը վկայում է անձի կողմից հանցանք կատարելու մասին,

2) ապացույցներ, որոնք ձեռք են բերվել ձերբակալումից հետո կամ այդ գործողությանը միաժամանակ և իրենց բնույթով ձերբակալման արդյունքում ձեռք բերված ապացույցներ, օրինակ՝ մատնահետքը, որը փորձագիտական եզրակացության արդյունքում կարող են վերաճել ապացույցի, ձերբակալված անձի ցուցմունքը և այլն:

Անկախ աղբյուրի տեսությունը թերևս բացառման կանոնի ամենաարդարացված բացառումն է, որի կիրառումն այնքան խնդրահարույց չէ, որքան այն բացառությունները, որոնք թույլատրում են կիրառել ակնհայտ ոչ իրավաչափ վարույթային գործողությունների արդյունքում ձեռք բերված տվյալները: Ձերբակալման համատեքստում դրանք կարող են դրսևորվել հետևյալ կերպ.

1) ապացույցներ, որոնք ձեռք են բերվել ոչ իրավաչափ ձերբակալման ընթացքում, օրինակ՝ ձերբակալվածի հայտարարությունները, որոնք տեղ են գտել ապացույցի տեսակ համարվող ձերբակալման արձանագրության մեջ,

2) ապացույցներ, որոնք թեև ոչ իրավաչափ ձերբակալման արդյունք են, սակայն ձեռք են բերվել ձերբակալումից հետո պատշաճ կատարված քննչական գործողության ընթացքում,

³ Տե՛ս Ryo Ogiso, The exclusionary Rule in Criminal Procedure : a comparative study of the English, American, and Japanese approaches <https://sas-space.sas.ac.uk/3736/1/1316-1420-1-SM.pdf>:

⁴ Տե՛ս Donald E. Wilkes, Critique of Two Arguments Against the Exclusionary Rule: The Historical Error and The Comparative Myth <https://scholarlycommons.law.wlu.edu/cgi/viewcontent.cgi?article=3118&context=wluwr>:

⁵ Տե՛ս Murray v. United States, 487 US 533 (1988):

օրինակ՝ ձերբակալվածի ցուցմունքը պատշաճ հարցաքննության եղանակով:

Երկրորդ դեպքում խախտումները, որոնք կարող են համարվել էական, կապված ձերբակալման ընթացքի կամ հիմքի հետ, ըստ էության կապ չունեն ապացույցների ձեռք բերման ընթացքի հետ, քանի որ ապացույցներ ձեռք բերելու ճանապարհն այստեղ քննչական գործողության կատարումն է: Հետևաբար, եթե նույնիսկ անձի սահմանադրական իրավունքի խախտմամբ կատարվել է ձերբակալում, սակայն դրան հաջորդած քննչական գործողությունների կատարման ընթացքում անձի իրավունքները չեն խախտվել՝ կապված բուն քննչական գործողության կարգի կամ այդպիսի գործողության ընթացքում նրա սահմանադրական իրավունքների հետ, ապա այդպիսի ապացույցը կարող է ճանաչվել թույլատրելի: Իհարկե, այսպիսի մոտեցումը կարող է արժանանալ քննադատության այն հիմնավորմամբ, որ որոշ ապացույցներ ունեն սերտ առնչություն ձերբակալման փաստի հետ և ուղղակիորեն դրա արդյունք են: Օրինակ, ցուցմունքի դեպքում այն վերցվում մի սուբյեկտից, որն իրականում պետք է գոյություն չունենար, եթե իրավապահ մարմինը անհիմն ձերբակալում իրականացրած չլիներ: Այդուհանդերձ, անգամ այս դեպքում ելակետայինն այն է, որ անձը փաստացի իրազեկված լինի իր կարգավիճակի, այդ կարգավիճակից բխող իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև տվյալ քննչական գործողության հետևանքների մասին: Բացի այդ՝ էական է նաև կամավորության փաստը, անձի այլընտրանք ունենալու իրավաբանական հնարավորությունը: Եթե ձերբակալվածը պատշաճ իրազեկված է ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքի, իսկ ցուցմունք տալու դեպքում՝ այն դատարանում իբրև իր դեմ ապացույց օգտագործելու հետևանքի մասին, սակայն ինքնական ցուցմունք է տալիս, միաժամանակ հարցաքննության ընթացակարգի խախտում տեղի չի ունեցել, ապա այդպիսի ապացույցը թույլատրելի է:

Այդպիսի ապացույցի թույլատրելիության մասին է վկայում նաև 97-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի սահմանումը, այն է՝ «Օրենքի էական խախտմամբ ստացված են համարվում այն տվյալները, որոնք ձեռք են բերվել՝ (...) քննչական գործողության կատարման ընթացքում մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձից, որի նկատմամբ փաստացի իրականացվել է քրեական հետապնդում՝ առանց այդ մասին նրան պատշաճ ծանուցելու»:

Թեև սա ձերբակալման հետ կապված իրավահարաբերության ուղղակի կարգավորում չէ, սակայն անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ այստեղ ապացույցի թույլատրելիության ելակետը ոչ թե անձի կարգավիճակն է, այլ նրա իրազեկված լինելը, որը նրան պատշաճ պաշտպանության հնարավորություն է տալիս: Նույն կերպ ոչ իրավաչափ ձերբակալման դեպքում ևս կարևորը անձի՝ իր կարգավիճակի վերաբերյալ պատշաճ ծանուցված լինելն է, որը նրան լիարժեք պաշտպանության հնարավորություն է տալիս՝ անկախ ձերբակալման իրավաչափությունից: Այդուհանդերձ անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ձերբակալման սկզբնական վիճակում անձի մոտ՝ պայմանավորված ձերբակալման փաստով, կարող է առաջանալ լինել հոգեճնշող վիճակ, որպիսի հանգամանքն էլ կարող է պայմանավորել ձերբակալվածի կողմից «կամավոր» ցուցմունք տալը, հետևաբար դատարանները ցուցմունքի թույլատրելիությանն անդրադառնալիս պետք է գնահատեն կամավորության բնույթը: Այս խնդրին առավել մանրամասն անդրադարձել ենք սույն հոդվածի ձերբակալման ընթացակարգի խախտմամբ ձեռք բերված ապացույցների թույլատրելիության գնահատման հատվածում՝ համեմատական տանելով ձերբակալված անձի հայտարարությունների և ցուցմունքների միջև, ընդգծելով նրանց առանցքային տարբերությունները, որոնք առանձին դեպքերում, կախված գործի փաստական հանգամանքներից, կարող են վկայել ցուցմունքի թույլատրելիության մասին:

Ոչ իրավաչափ ձերբակալման արդյունքում ձեռք բերված ապացույցների թույլատրելիու-

թյան խնդիրն առավել ցայտուն է արտահայտվում անհիմն ձերբակալումից հետո կատարված անձնական խուզարկությամբ հայտնաբերված ապացույցների գնահատման դեպքում. չէ որ անձնական խուզարկությունը կարող է կատարվել նաև հարկադրաբար և, որպես կանոն, ուղեկցում է ձերբակալմանը, այն ըստ էության ձերբակալման արգասիք հանդիսացող քննչական գործողություն է և միակը, որը որպես անհետաձգելի ապացուցողական գործողություն կարող է կատարվել տեղում՝ ձերբակալում կատարող նույն սուբյեկտի կողմից: Վիճարկելի է նաև ձերբակալված անձից վերցված նմուշների թույլատրելիության հարցը, քանի որ ձերբակալված անձի համար հետազոտության համար նմուշներ հանձնելը պարտականություն է, ոչ թե իրավունք, ի տարբերություն ցուցմունք տալու իրավունքի:

Իրավակիրառ պրակտիկայում մշակվել են որոշ չափորոշիչներ, որոնք կարող են նման ապացույցները դարձնել թույլատրելի: Որքան էլ ՄԻԵԴ-ը բազմիցս արձանագրել է «թունավոր ծառի պտուղները թունավոր են» կանոնի միանշանակություն, այդուհանդերձ մի շարք իրավիճակներում թե՛ ՄԻԵԴ-ը, թե՛ ՀՀ Վճռաբեկ դատարանը (և ոչ միայն) այս կանոնից տարբնույթ հիմնավորումներով շեղվել են, ինչը ներկայացվել է Ա. Ղամբարյանի կողմից⁶:

Այս առումով հետաքրքիր մոտեցում է մշակվել ՄԻԵԴ-ի «Գաֆգենն ընդդեմ Գերմանիայի» գործով: Եվրոպական դատարանը (Մեծ պալատի 2010 թ. հունիսի 1-ի որոշումը) մեղադրյալին խոշտանգելու ճանապարհով ձեռք բերված ցուցմունքից ածանցյալ ապացույցները դիտարկել է թույլատրելի, քանի որ մեղադրյալը մոլորեցրել է ոստիկանության ծառայողներին՝ ասելով, որ երեխան այլ առևանգողի մոտ է և անօրինական հարցաքննության նպատակը երեխային փրկելն է եղել, ոչ թե քրեական հետաքննության առաջխաղացումը, չնայած այն հանգամանքին, որ արդյունքում հայտնաբերվել է երեխայի դին:

ՀՀ Վճռաբեկ դատարանը ևս մշակել է հիշյալ տեսությունից բացառման կանոններ և 31.05.2014 թ. որոշմամբ՝ հստակեցրել է թունավոր ծառի պտուղների տեսության «բխելու» և «պատճառական կապի» չափանիշները: «Բխելու» չափանիշը ենթադրում է, որ ապացույցն անմիջականորեն ձեռք է բերվել օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցից: «Պատճառական կապի» չափանիշը նշանակում է, որ անօրինական ճանապարհով ստացված տվյալի վրա ամբողջությամբ հիմնված ապացույցն անթույլատրելի ճանաչելու համար անհրաժեշտ է, որ այդ ապացույցը ողջամիտ ջանքերով ստանալու հնարավորությունը բացակայի:

Այս իմաստով առավել պրակտիկ են ամերիկյան դատարանների մոտեցումները, որոնք ուղղակիորեն կապված են ձերբակալման փաստի հետ:

Այսպես, «Յուտա նահանգն ընդդեմ Սթրիֆի» որոշման հիմքում ընկած էին հետևյալ փաստերը և հիմնավորումները. ինչ-որ մեկն անանուն հաղորդում էր տվել թմրամիջոցների շրջանառության մասին (579ԱՄՆ-2016 թ.): Ոստիկանության սպան հետևում է տանը՝ ականատես լինելով հաճախակի կարճատև այցելությունների: Այցելուներից մեկը Սթրիֆն էր: Սպան տեսնում է, որ Սթրիֆը դուրս է գալիս տնից և կանգնեցնում է նրան, ապա խնդրում է Սթրիֆի անձը հաստատող փաստաթուղթը: Ստուգմամբ տեղում պարզվում է, որ Սթրիֆն ունի երթևեկության խախտման համար ձերբակալման չմարված օրդեր, ինչը սպային հիմք է տվել ձերբակալելու նրան:

Սովորաբար սպաներին թույլատրվում է խուզարկել կասկածյալներին ձերբակալելուց հետո և Սթրիֆին խուզարկելիս մետամֆետամինով և թմրամիջոցների պարագաներով պարկ է հայտնաբերվել: Գերագույն դատարանը գտավ, որ եթե նույնիսկ սպան ողջամիտ կասկած

⁶ Տե՛ս Ա. Ղամբարյան, «Թունավոր ծառի պտուղները թունավոր են» կանոնը և բացառությունները քրեական դատավարությունում», ՀՀ քննչական կոմիտե, էջեր 36-44:

չունենալ Սթրիֆին կանգնեցնելու համար, այդուհանդերձ ապացույցները պետք է թույլատրելի համարվեն: Այս վճռի հիմքն այն է, ինչ դատարաններն անվանում են «թուլացման դոկտրինա» («attenuation doctrine»), համաձայն որի՝ եթե ոստիկանության ապօրինի վարքագծի և ապացույցների միջև կապը բավականաչափ հեռավոր է կամ ընդհատված, ապա ապացույցները թույլատրելի են: Այս դեպքում ձերբակալման օրդերի առկայությունը «թուլացնում էր» ապացույցների և դրան հանգեցնող անօրինական «կանգ առ» հրամանի միջև կապը⁷: Այսինքն՝ միջամտող փաստերի առկայության դեպքում թուլանում, նվազում է ոչ իրավաչափ ձերբակալման հանգամանքի ազդեցությունը դրա արդյունքում ձեռք բերված փաստական տվյալի թույլատրելիությունը որպես ապացույց գնահատելիս:

Դատավոր Քլարենս Թոմասը կենտրոնացել է երեք գործոնի վրա.

ժամանակավոր մոտիկություն. սպան հայտնաբերել է մաքսանենգ ապրանքը Սթրիֆին կանգնեցնելուց միայն րոպեներ անց: Նման «ժամանակավոր մոտիկությունը» ապացույցների և ոստիկանության անօրինական վարքագծի միջև, կշռում է ապացույցները ճնշելու (բացառելու) օգտին:

Միջամտող հանգամանքներ. ձերբակալման վավեր հրաման, որը ոչ մի կապ չունենալիս հետաքննության հետ, գոյություն ունենալով Սթրիֆի հետ հանդիպումը: Այդ հրամանը թույլ է տվել ձերբակալել և խուզարկել, թեև Սթրիֆին կանգնեցնելու պահին այդ հիմքի մասին սպային հայտնի չի եղել: Նման միջամտող հանգամանքը նպաստում է ապացույցների ընդունմանը:

Սպայի նպատակն ու գոռոզությունը. Թոմաս Ֆակրելի կողմից Սթրիֆի ձերբակալումը համարվեց «առավելագույնս անփոյթ» և հավանաբար ոստիկանության «համակարգային կամ կրկնվող» սխալ վարքագծի մաս: ԱՄՆ Սահմանադրության չորրորդ փոփոխության իրավունքների խախտումը, լինելով ոչ «նպատակային», ոչ էլ «աղաղակող», վկայում է ապացույցների ընդունման մասին⁸:

Այսպիսով, բոլոր այն դեպքերում, երբ կատարվել է ոչ ակնհայտ ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալում, որի արդյունքում ձեռք են բերվել ապացույցներ, ապա այդպիսի ապացույցների թույլատրելիությունը կարող է որոշվել հետևյալ չափանիշներով.

1. Ապացույցի ձեռք բերման նպատակը, եթե այն հետապնդում է ոչ թե հետաքննության առաջխաղացման նպատակ, այլ հանրային առավել գերակա շահ՝ հասարակության անվտանգություն, մարդու կյանք, առողջություն և այլն,

2. Կամավորությունը, եթե ձերբակալվածը իրազեկվել է ինքնամեղսագրման վտանգի մասին, այդուհանդերձ կամավոր տեղեկություններ է հայտնել,

3. Թուլացնող հանգամանքները ոչ իրավաչափ ձերբակալման և դրա արդյունքում ձեռք բերված փաստական տվյալների միջև:

Ինչ վերաբերում է ձերբակալման ընթացակարգի խախտմամբ ձեռք բերված ապացույցներին, ապա այստեղ ևս մշակված են թույլատրելիության որոշ չափորոշիչներ: Այս դեպքում ձերբակալման հիմքն իրականում առկա է, սակայն ընթացակարգային որոշ խախտումներ կարող են հանգեցնել ապացույցի անթույլատրելիության: Օրինակ՝ ձերբակալվածին լռելու իրավունքի կամ ձերբակալման պատճառի մասին չիրազեկելը, եթե վերջինս ինքնամեղսագրող տեղեկություններ է հայտնում, որը նրա կամքից անկախ տեսագրվում է ոստիկանության ծառայողի (պարեկի) համազգեստին ամրացված տեսանկարահանող սարքի միջոցով: Տե-

⁷ Տե՛ս U.S. v. Vargas, 369 F.3d 98 (2d Cir. 2004), In re Hoch, 82 A.3d 1167 (Vt. 2013):

⁸ Տե՛ս <https://www.nolo.com/legal-encyclopedia/what-if-the-police-don-t-have-reason-stop-me-find-i-have-warrant-after-stopping-me.html>:

սանկարահանող սարքի տեսագրությունը հետագայում կարող է վարույթին ներկայացվել իբրև փաստական տվյալ: ԱՄՆ գերագույն դատարանը մշակել է որոշ չափորոշիչներ, որոնք կարող են այդպիսի ապացույցները դարձնել թույլատրելի, դրանք են.

1. Հասարակական անվտանգության բացառություն. վտանգավոր իրավիճակներում «հանրային անվտանգության» բացառությունը թույլ է տալիս ոստիկաններին հարցաքննել կասկածյալներին զենքի մասին՝ առանց Միրանդայի նախազգուշացման, որը կարող է օգտագործվել դատավարության ժամանակ կասկածյալի դեմ (NY v. Quarles, 467 US 649 (1984)): Երբ ոստիկանության ծառայողը տեղեկություն է ստանում բանուկ հատվածում ենթադրյալ հանցանք կատարած անձի կողմից լիցքավորված ատրճանակ թողնելու մասին, վերջինիս արգելանքի վերցնելիս առաջին գործողությունը պետք է լինի ատրճանակի մասին տեղեկությունների ստացումը, ոչ թե ձերբակալվածին միրանդիզացնելը:

2. Վկայի բացահայտում. Եթե Միրանդայի կանոնի խախտմամբ արված հայտարարություններից ոստիկանությունն իրազեկվում է մեկ այլ վկայի մասին, այդ վկան կարող է ցուցմունք տալ կասկածյալի դեմ դատավարության ժամանակ (Միչիգանն ընդդեմ Թակերի, 417 US 433 (1974)):

3. Անխուսափելի բացահայտում. Եթե ոստիկանությունն ի վերջո ինքնուրույն կգտներ շոշափելի ապացույցներ, ապա ապացույցները կարող են օգտագործվել դատավարության ժամանակ կասկածյալի դեմ, նույնիսկ եթե ոստիկանությունն իմացել է այդ մասին Միրանդայի կանոնների խախտմամբ հարցաքննության ժամանակ⁹:

4. Իրեղեն ապացույցների հայտնաբերում. ցանկացած իրեղեն ապացույց, որի մասին ոստիկանությունը տեղեկանում է Միրանդայի կանոնները ոտնահարող հարցաքննության միջոցով, սովորաբար կարող է օգտագործվել կասկածյալի դեմ դատարանում (ԱՄՆ ընդդեմ Պատանեի, 543 US630 (2004)): Թեև իրեղեն ապացույցները համարում են թույլատրելի, սակայն այն պայմանով, որ դրանք ձեռք են բերվել կամավոր խոստովանության արդյունքում, այլ ոչ թե բռնություն գործադրելու հետևանքով, որի դեպքում ապացույցը հավանաբար կճանաչվեր անթույլատրելի¹⁰: Այստեղ անհրաժեշտ է նկատել, որ նման իրավիճակում միայն կամավորությունը բավարար չէ այդ ապացույցը թույլատրելի ճանաչելու համար: Կամավոր հայտարարությունը պետք է լինի ինքնաբերական, մինչև ծառայողը կհասցնի ձերբակալվածին իր նվազագույն իրավունքները հայտնել: Իսկ այն դեպքերում, երբ ծառայողը դիտավորյալ կամ անփութորեն ձգձգել է Միրանդայի նախազգուշացումներ տալը կամ մինչ այդ սկսել է հարցեր ուղղել դեպքի վերաբերյալ, ապա այդպիսի ապացույցներն անթույլատրելի կլինեն: Հարկ է նաև նկատել, որ ձերբակալման սկզբնական ժամանակահատվածում, պայմանավորված ձերբակալման ընթացքում ֆիզիկական հարկադրանքի կիրառման, դրա հնարավոր սահմանազանցումների փաստով, ձերբակալված անձանց մոտ կարող է առաջանալ հոգեճնշող վիճակ: Ոստի դատարանները հայտարարության կամավոր և ինքնաբերական լինելու հանգամանքը քննարկելիս պետք է գնահատեն՝ արդյո՞ք նման «կամավորությունը» հոգեճնշող վիճակի դրսևորում չէ՞ հաշվի առնելով անձի տարիքը, բնութագիրը, հանցագործության ծանրության աստիճանը, կատարման եղանակը և այլն: Որոշ ընդհանրություն կա ձերբակալված անձի ցուցմունքի և հայտարարությունների միջև և թվում է, որ հոգեճնշող վիճակի առկայությունը պետք է հաշվի առնել նաև ցուցմունքի թույլատրելիությունը գնահատելիս: Իհարկե, դատարաններն առանձին դեպքերում կարող են այդ հանգամանքին գնահատական տալ՝ դարձյալ հաշվի առնելով

⁹ Տե՛ս <https://www.nolo.com/legal-encyclopedia/statements-obtained-police-violate-miranda.html>:

¹⁰ Տե՛ս <https://supreme.justia.com/cases/federal/us/542/630/>:

անձի տարիքը, հանցագործության ծանրության աստիճանը, կատարման եղանակը և այլն, սակայն հարկ ենք համարում ընդգծել որոշ առանցքային տարբերություններ. ձերբակալվածի հայտարարությունները և ձերբակալման ընթացքը գրեթե չունեն ժամանակային խզում, որի դեպքում անձն առավել դժվար կարող է հասնել ինքնակառավարման, բացի այդ՝ հայտարարությունները արվում են ձերբակալում իրականացնող նույն սպայի ներկայությամբ, որի գործողություններից էլ անձի մոտ կարող էր առաջացած լինել հոգեճնշող վիճակը, մինչդեռ ցուցմունքը վերցվում է այլ սուբյեկտի (քննիչի) կողմից և առկա է հստակ ժամանակային խզում ձերբակալման պահի և ցուցմունք տալու պահի միջև: Այս տարբերությունները վկայում են ցուցմունքի թույլատրելիության մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ դատարանի որոշմամբ խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը ենթակա է մերժման, եթե նույն օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքում անձին ձերբակալելիս հիմնավոր կասկածն ակնհայտ չի եղել անմիջականորեն ծագած: Գտնում ենք, որ երբ անձի ձերբակալման պահին հիմնավոր կասկածը չի եղել ակնհայտ անմիջականորեն ծագած, դատարանները խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննելիս ոչ թե պետք է գիլիոտինի էֆեկտով մերժեն այն, այլ յուրաքանչյուր դեպքում վեր հանեն ոչ իրավաչափ ձերբակալման և ձեռք բերված փաստական տվյալների միջև առկա պատճառահետևանքային կապը, ինչպես նաև ձերբակալման ոչ իրավաչափության ազդեցությունը ձեռք բերված ապացույցների վրա:

Բացառման կանոնի բացառությունները տարբեր երկրների իրավական համակարգերում գործում են ոչ թե օրենսդրական կարգավորումների, այլ դատական նախադեպերի մակարդակում, ինչը բնական է, քանի որ այդ որոշումները բխում են կոնկրետ գործի փաստական հանգամանքների մանրակրկիտ վերլուծությունից, որոնք փաստական հանգամանքների աննշան փոփոխության պայմաններում համանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործի վերաբերությամբ կարող են կիրառելի չլինել: Ուստի մեջբերված որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները ՀՀ իրավական համակարգում ևս կարող են կիրառվել դատական նախադեպի մակարդակում՝ առանց օրենսդրական կարգավորումներ սահմանելու՝ հաշվի առնելով առանձին դեպքերում դրանց խոցելիությունը և ոչ բոլոր դեպքերի վերաբերությամբ կիրառելիությունը:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ հարկ է ընդգծել, որ թեև իրավակիրառ պրակտիկայում մշակվել են բացառման կանոնից որոշ բացառություններ, որոնք առանձին դեպքերում արդարացված են, այդուհանդերձ այն շարունակում է մնալ իրավապահ մարմինների ապօրինի գործողությունների դեմ պայքարի լավագույն միջոցը: ԱՄՆ գերագույն դատարանի կողմից մշակված և այլ երկրների իրավական համակարգերում տարածված այս տեսությունները իրավաբանական գրականության մեջ միանշանակ չեն ընդունվում: Դրանք մեծապես խարխուլում են բացառման սանկցիայի անմիջականությունն ու կանխատեսելիությունը՝ դրանով իսկ նվազեցնելով կանոնի կանխարգելիչ նշանակությունը¹¹: Ուստի դատարանները բացառման կանոնի բացառությունները կիրառելիս պետք է զգուշավորություն ցուցաբերեն՝ ապահովելով հավասարակշռություն հանցագործությունների բացահայտման և անձանց սահմանադրական իրավունքների ապահովման նպատակների միջև:

¹¹ Տե՛ս *Richard M. Re*, Due process exclusionary rule, Harvard law review, number 7, May 2014, p. 1895 http://harvardlawreview.org/wp-content/uploads/2014/05/vol127_re.pdf:

Annotation. The given article is dedicated to the main problem of assessment regarding the admissibility of evidence obtained as a result of an unlawful arrest. The essence of the connection between the causality related to such pieces of evidence and arresting facts was studied in the given article. The issues on the admissibility of the evidence have been discussed, obtained not only as a result of a non-lawful arrest but also by violation within the process of arrest. Foreign experience regarding the admissibility of such kind of evidence is presented.

Аннотация. Статья посвящена вопросу оценки допустимости доказательств, полученных в результате незаконного задержания. В статье проанализированы характер причинно-следственных связей между такими доказательствами и фактом задержания, правило исключения и отступления от него. Анализируется вопрос о допустимости таких доказательств, полученных не только в результате необоснованного задержания лица, но и в результате нарушения порядка задержания. Рассматривается зарубежный опыт относительно допустимости таких доказательств.

Բանալի բառեր - բացառման կանոն, ապացույց, կամավորություն, ձերբակալվածի հայտարարություններ, ցուցմունք, անխուսափելի բացահայտում, թուլացման դոկտրին, վկայի բացահայտում, իրեղեն ապացույցներ, հասարակական անվտանգություն:

Keywords: *exclusionary rule, evidence, volunteering, statements of the arrested person, testimony, inevitable discovery, attenuation doctrine, discovery of witness, physical evidence, public safety.*

Ключевые слова: *правило исключения, доказательство, добровольность, заявление задержанного, показания, неизбежное разглашение, доктрина затухания, раскрытие свидетеля, вещественные доказательства, общественная безопасность.*

Շահինյան Ն. - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի ուսումնական ասիստենտ, ոստիկանության կապիտան, էլ. հասցե՝ naira-shahinyan@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 26.01.2023 թ., տրվել է գրախոսության 26.01.2023 թ., երաշխավորվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Հովհաննիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 19.04.2023 թ.: